

խակ օտար հասարակութեան, ուսնելի համար, Հայկից սկսած մինչև մեր ժամանակը, ամբողջ հայոց պատմութիւնն անցնելը, այն էլ երեք, չորս ժամկէտ մէջ, ինչ խորհուրդ ունիւր և միթէ՞ բացի շփոթութիւնից ուրիշ հետքերը կարող էր թողնել օտար լոյսը զիստմը: Յոյս ունենք որ պ. Լըրիցովը, որքան և զիստական իրան համարէր, պէտք է խոստովանի, որ կան մարդիկ, որք իրանց կեանքում աւելի սխտեմական կերպով են սովորել քան թէ նա, աւելի տեսել են ու գիտեն, քան թէ նա: Այս ձևով ոչ մի տեղ հասարակական դաստիարակութիւն չեն անում: Եթէ պ. Լըրիցովը կարգադրէր վերջնէն ու տպէր, — դուրս կը գայ մի համառօտ դատարարի բնույթը հայոց պատմութեան թե ան, աւելի ունի, իսկ հասարակական դաստիարակութեան նպատակը պէտք է լինի վերջնէն մի մասնաւոր երեւոյթ մի շրջան ամբողջ մի գիտնական մարմնից, և ընդարձակել նրան, հասկանալի և մատչելի անել նրան հասարակութեանը և կրթական եղբայրացութիւններ անել նորանից լոյսնելի առաջ....

Մենք այս ձևով չենք խօսի պ. Լըրիցովի հետ, եթէ նա ինքն իր գրականական և հասարակական շատ և շատ տարիներ թափառեալ գործունէութեամբ ինքն տեղի չը տար մեզ այսպէս խօսելու....

Նոյն պարսն Լըրիցովը մի ժամանակ առանց որ և է սխտեմական քաղաքա-անասական հիմնութեան հրատարակում էր մի առեւտրական և անասական թերթի հայոց լեզվով՝ «Առաջադիմ» անունով, առանց արհեստագործական ստեղծարարութեան, այժմ հրատարակում է մի հնագիտական ամսագիր, մի և նոյն ժամանակ հենց որ մի թատրոնական պիէսա է դուրս գալիս, նա մի ֆէլիէտօն է գրում, բարձրից և արհամարհական ձևով քննադատում.... Այստեղ չենք կարող չը յիշել որ նորեւրումն նոյն պարսն Լըրիցովը մեղադրուէր իր մի ֆէլիէտօնի մէջ («Кавказ» լրագրում) պ. Գ. Քալանթարեանի նոր պիէսան, որ նա նման էր դառնում այն պատկերներին, որ ուսու ժողովուրդի մէջ շատ տարածված են: «Ահա ձեզ Փարիզ քաղաքը», ասում է հինգ կողմերով պատկերներ ցոյց տուողը, և աւելցնում է իսկոյն մի որ և է անկապ մեկնութիւն.... յետոյ պատկերը անհետանում է և նրա տեղը ուրիշն է բռնում.... և այդպէս շարունակ:

Պ. Լըրիցովը մեղադրանքը Վարդանիստի

Թեան գործ չէ բոլորովին... վաղուց է որ չենք տեսնում ձեր հնագիտական օրագրի տեսարանները չը լինի թէ դատարար էք նրա վերադարձը փոխելով... փոխանակ Վարդանիստի Հնութիւն առնուան, կը կարգադրէ հետեւել վերադարձը կ'ոք կ'առնան ապագան... Բայց ինչպէս նախադրեալից պ. դաստիարակ հայ կնոջ ապագան... շատ հատարակ կերպով: Նա հարցրից՝ դուք սպասում էք որ ես ասեմ ձեզ ձեր ապագան... բայց ես ինքս էլ սպասում եմ թէ ինչ կը լինի հայ կնոջ ապագան....

Եթէ պ. Լըրիցովը դաստիարակութիւններից յետոյ զինի ցաւերը դրացի, մեր վերջին կ'օնց էր տեսնել ինչ յետոյ, խոստովանում եմ ենթարկվեցայ ուրիշ աւելի ստատիկ ցաւին, այն է փոքր ցաւին, որ միշտ լինում է երբ մարդս ուսում է անմարտել և վատ պատրաստված սպասել կերակուրները....

Չը նայելով որ այժմ դեռ բաւական ցուրտ է անում թիֆլիսում, արարի վրա ձիւնը նոր է հալվում, բոյները դեռ չեն կանաչել, ինչպէս մեր պապերի ժամանակին էր լինում, երբ փետրվար ամսին արդէն մարդիկը քիչ էր մնում խորովում էին չրիքը, — այժմ, ասում եմ, երբ մի հատիկ ծաղիկ չէք գտնի ամբողջ թիֆլիսում, պ. Բաքիին յանկարծ ընծայել է մեզ ամբողջ «Փոռնը»:

Հայի որ տունն էլ որ գնաց, սեղանի վրա դրած մի «Փոռնը» էք տեսնում: Հասկանալի է որ այդպիսի մի ձուկ «Փոռնը» մէջ պատահում են դանդաղ տեսակ ծաղիկներ....

Բայց խօսենք ծանր կերպով: Պ. Բաքիին «Փոռնը» մենք կարող ենք բաժանել չորս որոշ մասերի: Ի՞նչպիսի, լրիվական, լեզունդներ և վերջապէս թիֆլիսի լեզվով բանաստեղծութիւններ:

Նոր պիէսի դէմ, կարող ենք ամենահաղիստ խղճմանքով վերաբերել նոյն իսկ պ. Լըրիցովի դաստիարակութեանը: Պատկերը ներկայանում էր անգաղաք ուրիշ պատկերի տեղը, մէկ միւսի տեղն էր բռնում, առանց կապ նախընթացի և հետեւելի հետ... աւելի լաւ և յարմար խօսք, քան թէ ուսու «Тема. Восток» դասը, մենք չենք կարող գտնել պարսնի կարգադրման մի տեսակ մօզաիկ էր....

Անկասկած որ պարսնի անձնատուրութեանը դաստիարակ, մենք չենք կարող չը խոստովանել որ նա ընդարձակ բնական բնութեանութիւններին տէր մարդ է, և գուցէ նրան պակաս չէ՝ ահագին աշխատասիրութիւնը, որ նա և ցոյց տուցւոյ այդ դաստիարակութիւնների մէջ, — բայց գիտութեան սխտեմական ուսուցիչ, որ և է կրթական հայեացք, որ անհրաժեշտ է ամեն հասարակական դաստիարակութեան մէջ, բայց մասնաւոր պատմական դաստիարակութեան մէջ, — պակաս է պարսնին.... Ամեն երկրում գիտութեան ամենաբարձր յատկութիւնը՝ համեստութիւնն է, — իսկ մեր երկրում նա ընդունված չէ.... Այս ձևերը դուրս եկան հայդէս հասարակութիւնը սովորեցնելու համար իրանք շատ քիչ հմտութիւն ունեցող անձինք՝ բացի արևելի Մոսկովիցից և պ. Միքայիլից, որք կատարելապէս տիրապետում են իրանց առարկան, — մնացածների մասին պ. պ. Ստարիկին, Լիխաչով, Պալերին և Լըրիցովի մասին, մենք չենք վախենայ ասել որ այդ անասելի յանդուգնութիւն է դուրս գալ հրապարակ հասարակութիւնը սովորեցնելու համար, երբ մարդիկ (որքան շնորհ և բնական իսկ կամ ընդունալութիւն էլ ունենային) իրանք դեռ կարող են ծանր և սխտեմական, աշխատասէր շատ տարիներ ուսման... մեզ կանն արդէն ուշ է նրանց համար, — այն ժամանակ հրաժարվեցէք դուրս գալ բնութիւն....

Պ. Լըրիցովը այն տեսակ անձն է, որ Լուսուպայում կանուանին autodidact, (ինքնուս) կամ որ հասարակապէս ասում են դիւլէտան: Իր դաստիարակութեան մէջ նա ամեն զիջուման յատուկ սովորութեամբ, վերջնում էր մի փաստ, մի մասնաւոր առանձնացած, ամենք բացառական երեւոյթ, — և իսկոյն դուրս էր բերում նրանից մի օրէնք... հայի մօտ օջախին հաստատարիմ լինելը ծագում է կրթականաշատական աւանդութիւններից և հրօմէական վէտարիների մօտ կրակ պահպանելու ծէսերից և այլն.... Հատ անգամ փաստերը

Առաջին ձևի բանաստեղծութիւնները, ամենաանաչող մասն է ամբողջ գրքի մէջ: Մենք չենք վախենայ ասելու, որ եթէ դիւլէտ ուղիւ սկսվել 28-որդ երեսից և Սօֆի բոլորովին չէր ապկրի, — մեծ կորուստ չէր լինի... Ընդհանրապէս ֆանի մի լրիվական բանաստեղծութիւններ, ինչպէս օրինակ «Ուր է իմ հայրենիքը» կամ «Միտքիւն» այն կողմից անաչող են, որ մտածող մարդը սկզբնաւոր նրանց կարգադրւոյ աւելի բարձր գաղափարներ է սպասում և յանկարծ սխալվում է տեսնելով որ բանաստեղծութեան սկզբից խոստացած ընդարձակ հասարակական պրօգրամը վերջանում է մի փոքրիկ, բոլորովին փոքրիկ գաղափարով... Բացի սորանից հարկաւոր է ասել, որ ամեն տեղ, ուր պ. Բաքիին դուրս է բերում կանանց և աղջիկներին, նրանք անաչող են... Պ. Բաքիին, մի բանաստեղծի համար կանանց սեռի հետ չէ կարելի այդպէս ստանալու անհոգութեամբ վարվել՝ կանանց կամ պէտք է սիրել, կամ պատուել, կամ գնել... աստ և է: Ուրիշ կողմից չենք կարող չը ցոյց տալ մի քանի ճշմարիտ աշողված և գեղեցիկ բանաստեղծական կտորներ, որոնց թուումը կը յիշենք հետեւեալները՝ «Նուէր N... յիշատակին», «Դպրեակ», «Խրատ հայ բանաստեղծին», «Պոետ» և այլն և այլն....

Թող ներուր ինձ բերել այստեղ մի տեղ «Դպրեակ» բանաստեղծութիւնից, որտեղ պօսող է ինչ և նոր ուղղութեան հակասութիւն է ցոյց տալիս: Այդ տեսակ տեղը կարգադրւոյ հայը ոգևորվում է, բացի բարձր հասարակական դրաժմաբերից, նա ուրախանում է, տեսնելով որ նրա լեզուն, ոգրմանը, գեղեցիկ աշխարհաբարը, դառնում է գեղեցիկ, զերաճիչ և մի և նոյն ժամանակ ուժեղ

միմենց հակառակում են շատ անգամ չափաւորութիւն է լինում... հայոց գիւղական աղքատութեան մէջ հայրը ծախում է իր աղջկանը փեսային, օրպէս աշխատող ոյժ... հօր համար շատ աղջիկ ունենալը կարծապէս փոքր հետեւ նա նրանցից փող է ստանում... Բայց որքան մեղ յայտնի է, սորանով բաժինը է շինում հայրը իր աղջկայ համար....

Լըրի մի օրինակ՝ եկեղեցական օրէնքով մայրը չէ կարող ներկայ գտնվել երկնայի մկրտութեանը... իսկ երբ մի երկնայ գիւղում հիւանդան է ու չէ կարող մկրտվել եկեղեցում ու նրան տանն են մկրտում, այն ժամանակ մի սենեակից բաղկացած խրճիթում կամայ ակամայ մայրը ներկայ չէ գտնվում մկրտութեանը....

Պ. դաստիարակ անգաղաք ներկայանում էր հայոց ժողովրդական անհաստատութիւնները, (որք ամեն աղքի մէջ կան) որպէս ընդհանրացած կանոններ մեր աղքի մէջ, դուրս բերելով նրանցից օրէնքներ... որովհետեւ ամեն մարդ կուպաշտութեան ժամանակ մի սեպհական կուռք էր պաշտում, հիմայ էլ ամեն հայ մի սուրբին է պաշտում, այնպէս որ աղջիկը որ իր հօր սուրբին է պաշտում, պատկերով թողնում է նրան և սկսում է իր մարդու սուրբին պաշտել... և այլն

Չենք խօսում այն բանի վրա թէ որքան հեշտ է սկզբնական հայոց անբարոյականութեան վրա խօսելով, ներկայացնել հասարակութեան առջև մեր պատմութիւնից միայն տեղը պատկերները և անձնատուրութիւնները, անտես առնելով նրա լաւ կողմերը և պատուելի անձնատուրութիւնները, օրինակ խօսել Պապ Թագաւորի վրա և չը խօսել Ալուսիա պրէսի վրա և այլն, չենք խօսում թէ ինչ ապաւարութիւն պիտի անէր այդ տեսակ կերպով կարգադրած դաստիարակութիւնը օտար լոյսի վրա....

Միայն կասնք, որ պ. Լըրիցովը ոչինչ տեսնելութիւն չունենալով թէ ինչ ձևով պիտի մշակվի այս կամ այն հարց, սուտացի է որ մի հին աղբի մէջ կնոջ դրոթիւնը պատկերացնելով ամենալաւ ամենաճշդիւ, (թէ էլ ի հարկէ ամենափոքար) գիտական միջոցը հետեւեալն է՝ ներկայացնել կնոջ այն հասկացողութեան հասկացում որ ունի ժողովուրդը նրա մասին... իսկ ժողովուրդի հասկացողութիւնը, նրա դաստիարակ այնքան չեն կերպարանաւորվում եկեղեցական կանոնների մէջ, որքան աղբի դրոթ կանաթիւն և մանաւանդ ժողովրդական բանաստեղծութիւնը և այլն....

Երկրորդ ձևն ասում է՝ ուրեմն մեր լեզուն էլ դառնում է եւրօպական լեզու... Լսեցէք այդ գեղեցիկ կտորը՝

Մի հետեւի դու փրճած, հացած ճիւղար պապերից ծուռ օրինակին, Մի յարմարիլ քո մանկիկ ուժերը Պոետանդամը նոյն ճաշակին:

Ձի նոյն անշարժ մարդ ծնունդը խաւար կեանքի է արտադրութիւն, Ծաղկիւր նոր կեանքով, նոր հոգով, սրտով, հօր նորանց նոր ձև և նոր գործիւն:

Մի խնդիր քո փրճած, հացած ճիւղար պապերից ծուռ օրինակին, հօր նորանց անկ, աղատ դարգանայ, Պաշտամունքի հետ աղատ բնութեան:

Առանց երկուդի, համարձակ, փաստ, Սուրբ իրական կեանքի պէտքերին, Գիտութիւն, արհեստ կ'աշխատեն նոյն, Մի դիւր նորանց տալար կըբերին:

Եւ հետոյ կան դառն ատելութեամբ Նախապաշարմանց դու փրճած չղկան, Հեռու վաղիսի սուտ ցնորներին, Պաշտական կանգնիլ միշտ ճշմարտութեան:

Կը լինես, այո, մի նոր երկոյթ Գո անբարոյացած, խնդ հարկերին, Կը տառ և ի նոր դարի, դարի գէպի յուսալ թոյլ — անաշարժական նորա կեանքին:

Գրքի մէջ գտնվող 15 գէշ և դէտր հայոց հնութիւնից «Սրտաւաղի» և «Մայն» գեղեցիկ և շատ աշողված անղեղվածներ են, մասնաւոր առաջինը: Մեր գրականութեան համար սա նոր երկոյթ է... ցանկալի է որ մեր լեզունդները, որոնցով շատ և շատ հարուստ է մեր աղբը, դարձեալ հաւաքվին և բանաստեղծական կերպով մշակվին: Թէ էլ անկան բանաստեղծութեան ձեռք պատանալով, թէ բաւական չէ:

նաստեղծութեան, նրա երկերի, պատմականի, լեզունդների մէջ....

Իսկ ինչ որ վերաբերում է պարսնից բերած անթիւ ստատիստիկական թւանշաններին, — նա ինքն էլ խօստովանց որ անկարելի է նրանց կատարել հաւատ ընծայել, — իսկ անձիւր և հաւատ ընծայելու անարժան թւանշաններից դուրս բերած եղբայրացութիւններին, — մենք էլ չենք կարող հաւատ ընծայել....

Վերջացնելով, չենք կարող մի խօսք չափել այն բանի վրա, թէ ինչ է դիւլէտան, ինչ է այն մարդու յատկանիշ բնաւորութիւնը, որ սխտեմական գիտութիւն չէ ստացել, որ մասնագէտ չէ... Վիլհամստին յատկանիշ է անշափ մեծ ինքնավստահութիւն, ինքնահաստատութիւն... որովհետեւ այն ինչ որ նա գիտէ, նա ստացել է շատ հեշտ կերպով, առանց սխտեմական ստիպման, իսկ բոլոր մնացածը որ աշխարհիս երեսին կայ, նա չէ ձանաչում և չը գիտէ, — և ուրեմն այն ինչ որ նա ինքն չը գիտէ, համոզված է թէ չը կայ էլ....

Այդ է պատճառը, որ զիջուման կարծում է թէ նա ամեն բան գիտէ, ուրեմն և յանդուգն է մինչև անաստութիւն....

Պ. պ. Լըրիցով, Ստարիկին, Պալերին և Լիխաչով... Եթէ դուք զիջումաններ չը լինելիք, դուք ձեզ չէիք թոյլ տայ համար անել գիտութեան հետ, նրան ծաղրիլի անել դուք ձեզ չէիք թոյլ տայ հայցնել գիտութեան վրա արլէ կ'իսի շորերը....

Գ. Ա. ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Исторія Монголовъ по армянскимъ источникамъ. Выпускъ второй. Переводъ и объясненія. К. П. Патканова. С. П. Б. 1874. (Մոնղոլների պատմութիւնը ըստ Հայոց աղբիւրների. Հատոր երկրորդ. Թարգմանութիւն և մեկնութիւնք Գ. Պատկանեանի: Պետերբուրգ, 1874.)

Եթէ հայոց հին լեզուի ուսումնասիրութիւնը, արդէն XVIII դարուց սկսած, կարեւոր էր համարվում Եւրոպայի գիտնականների համար իրանց լեզուաբանական հետազոտութիւնների մէջ, ներկայ դարում, կարելի է ասել, ոչ պակաս անհրաժեշտ է համարվում Հայոց գրականութեան գիտութիւնը իր թանկագին պատմական յիշատակարանների համար: Հայոց պատմաբանների մեծ մասը, Մովսէս Խորենացուց սկսած մինչև Սեբաստիոն Գուրգադապը, հետզհետեւ թարգմանեցան եւրօպական լեզուներով ու բազմակողմանի ծանօթութիւններով մեկնաբանեցան:

Իսկ «Փոռնը» մէջ գտնվող թիֆլիսի լեզվով բանաստեղծութիւնների մասին թող դատեն թիֆլիսցիները....

Բայց չը մոռանանք մեր խօսակցութեան թիւը... ես ասացի որ ամենալաւ ընթերցանութիւնը մեծ պատի համար «Միջուկ Հայաստանի» լրագրի առաջնորդող յօդվածներն են... ինչի....

Ահա ինչի: Մեծ պատի մարդս պիտի լինի բարեկաշտ, բարի, անմեղ, անվնաս... Երբ է մարդս բարեկաշտ, բարի անվնաս, — երբ որ ոչինչ չէ գրգռում նրան, ոչ որ չէ բարկացնում նրան, վերջապէս երբ մեր ներքինը, մեր ջղային սխտեմը հանդիստ դրութեան մէջն է: Երբ որ ես ուրախանում եմ, ուրեմն ներքինս չարժան մէջն եմ, շուտով կարող եմ և լաց լինել... իսկ ամենահանգիստ դրութիւնը իմ մարմնիս մէջ գտնում եմ, երբ ոչինչ բանի վրա չեմ մտածում, ջղային համակարգութիւնս հանգիստ դրութեան մէջն է, ոչինչ ինձ չէ գրգռում... այո դրութեան մէջ մարդս միշտ սկզբում է յօր անջնէ... իսկ երբ յօրանում է, նա ուրեմն հանգիստ է, ուրեմն և բարի... իսկ մեծ պատի ժամանակ մենք միշտ պիտի աշխատենք բարի լինել, ուրեմն պէտք է աշխատենք որքան կարելի է շատ յօրանջնէ... իսկ յօրանջնէս համար, (գոնէ ես յօրանջնէս համար որեւէ աւելի գրական միջոց գեղեցիկ ծանաչում) ամենալաւ միջոցը «Միջուկ Հայաստանի» լրագրի առաջնորդող յօդվածների կարգադրն է....

Ամսացի

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ